ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԻԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ՝ ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Մարիանա Սարգսյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչության միջազգային համագործակցության բաժնի պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները

ք. Բրյուսել, Բելգիայի Թագավորություն, 10-13 ապրիլի, 2024 թվական

4. Հրավիրող կողմը

Բոլոնիայի գործընթացի հետամուտ խմբի քարտուղարություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Բոլոնիայի գործընթացի հետամուտ խմբի հերթական համդիպմանը և Որակի ապահովման եվրոպական ռեգիստրի գործակալության ընդհանուր ժողովին

6. Քննարկված թեմաները

- 2024 թվականի մայիսի 29-ից 30-ը Տիրանայում (Ալբանիայի Հանրապետություն) կայանալիք նախարարական համաժողովի ընթացքում ընդունվելիք հայտարարության տեքստի (Տիրանայի նախարարական կոմյունիկե) լրամշակում և համաձայնեցում,
- Տիրանայում կայանալիք նախարարական համաժողովի կազմակերպչական հարցերի քննարկում,
- նախարարական համաժողովին զուգահեռ անցկացվելիք Գլոբալ ֆորումի օրակարգի քննարկում,
- Բոլոնիայի հետամուտ խմբի շրջանակում գործող հատուկ թեմատիկ խմբերի, Բոլոնիայի գործընթացի ներդրման համակարգող խմբի (BICG), Եվրոպական

բարձրագույն կրթական համայնքում գիտելիքի տարածման հատուկ խմբի և աշխատանքային խմբերի (Բոլոնիայի գործընթացի ներդրման գործընթացը մշտադիտարկող աշխատանքային խումբ, Հիմնարար արժեքների մշակման գծով աշխատանքային խումբ, Սոցիալական ուղղվածության հարցերով աշխատանքային խումբ, Ուսուցման և ուսումնառության աշխատանքային խումբ) հաշվետվությունների քննարկում,

- Բոլոնիայի գործընթացի հետամուտ խմբի քարտուղարության գործունեության հաշվետվության և քարտուղարության գործունեության նոր կանոնակարգի քննարկում,
- 2027 թվականի նախարարական համաժողովին ընդառաջ ընդունող երկրների թեկնածությունների քննարկում և քարտուղարության նոր համանախագահ երկրների հաստատում,
- Բոլոնիայի գործընթացի հետամուտ խմբի 2024-2027թթ. առաջնահերթությունների ներկայացում,
- Որակի ապահովման եվրոպական ռեգիստրի գործակալության (EQAR) գործունեության հաշվետվության քննարկում, 2024 թվականի բյուջեի կատարողականը, Գործակալության քարտուղարության թափուր պաշտոններում թեկնածուների ընտրությունը, DEQAR հարթակի հնարավորությունների ներկայացումը,
- Այլ ընթացիկ հարցեր:

7. *Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը*

Ապրիլի 11-ին մասնակցել եմ Բոլոնիայի գործընթացի հետամուտ խմբի 90-րդ համդիպման օրակարգում ընդգրկված հետևյալ հարցերի քննարկմանը՝ 2024 թվականի մայիսի 29-30-ը Տիրանայում կայանալիք նախարարական համաժողովի կազմակերպչական հարցեր, Գլոբալ ֆորումի օրակարգ, Բոլոնիայի հետամուտ խմբի շրջանակում գործող հատուկ թեմատիկ խմբերի, Բոլոնիայի գործընթացի ներդրման համակարգող խմբի (BICG), Եվրոպական բարձրագույն կրթական համայնքում գիտելիքի տարածման հատուկ խմբի և աշխատանքային խմբերի հաշվետվությունները, խորհրդատվական կառույցների (ՅՈՒՆԵՍԿՕ, Եվրոպական

ուսանողական միություն, Եվրոպական համալսարանների ասոցիացիա և այլն) զեկույցները, Բոլոնիայի գործընթացի հետամուտ խմբի քարտուղարության գործունեության հաշվետվությունը և քարտուղարության գործունեության նոր կանոնակարգը, 2027 թվականի նախարարական համաժողովին ընդառաջ ընդունող թեկնածու երկրների հաստատումը և ԲԳՀԽ քարտուղարության նոր համանախագահ երկրների հաստատումը, Բոլոնիայի գործընթացի հետամուտ խմբի 2024-2027թթ. առաջնահերթությունները:

Մասնակցել եմ 2024 թվականի մայիսի 29-30-ը Տիրանայում (Ալբանիայի Հանրապետություն) կայանալիք կրթության հարցերով նախարարական համաժողովի ընթացքում ընդունվելիք Տիրանայի նախարարական կոմյունիկեի նախագծի քննարկման և լրամշակման աշխատանքներին:

Ապրիլի 12-ին մասնակցել եմ Որակի ապահովման եվրոպական ռեգիստրի (EQAR) գործակալության ընդհանուր ժողովին, որի ընթացքում քննարկվել և հաստատել են Գործակալության 2024 թվականի գործունեության հաշվետվությունը, 2024 թվականի բյուջեի կատարողականը, անցկացվել է Գործակալության քարտուղարության թափուր պաշտոններում թեկնածուների ընտրության քվեարկություն: Ներկայացվել են DEQAR հարթակի հնարավորությունները:

Բոլոնիայի գործընթացի հետամուտ խմբի մի շարք անդամների հետ (Խորվաթիա, Անդորրա, Մալթա) զրուցել եմ միկրոորակավորումների համակարգի ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքների շուրջ, ծանոթացել եմ միկրոորակավորումների վերաբերյալ եվրոպական մոտեցումներին և պայմանավորվածություն եմ ձեռք բերել համապատասխան առավել մանրամասն տեղեկատվության և փաստաթղթերի փոխանակման վերաբերյալ: Ներկայացրել եմ տեղեկատվություն ՀՀ բարձրագույն կրթության և գիտության ոլորտի կառուցվածքի, գերակայությունների և կրթություն-գիտություն ոլորտների կապի ամրապնդմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Հանդիպում եմ ունեցել Բոլոնիայի գործընթացի ներդրման համակարգող խմբի համանախագահներ Հելգա Փոսսեթի (Ավստրիա, Կրթության, գիտության և հետազոտությունների նախարարություն) և Անն Քեթրին Իզաակսի (Իտալիա, Բարձրագույն կրթության ոլորտի փորձագետ) հետ, քննարկվել է 2024-2027թթ.

աշխատանքային ծրագրի շրջանակում Որակի ապահովման հատուկ աշխատանքային խմբում Հայաստանին ներգրավելու հարցը:

8.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Բոլոնիայի գործընթացի հետամուտ խմբի հանդիպման և Որակի ապահովման եվրոպական ռեգիստրի (EQAR) գործակալության ընդհանուր ժողովի օրակարգերում ընդգրկված հարցերի վերաբերյալ կայացվել են որոշումներ:

Լրամշակվել է Տիրանայի նախարարական կոմյունիկեի նախագիծը:

Բոլոնիայի գործընթացի հետամուտ խմբի մշտական քարտուղարության ստեղծման հարցին և վերջինիս գործունեության կանոնակարգի նախագծի քննարկմանն առաջարկվել է անդրադառնալ աշխատանքային խմբի հաջորդ հանդիպմանը:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Բոլոնիայի գործընթացի ներդրման համակարգող խմբի համանախագահները ողջունեցին Որակի ապահովման խմբում Հայաստանին ընդգրկելու առաջարկությունը և պատրաստակամություն հայտնեցին հարցին անդրադառնալ Բոլոնիայի գործընթացի հետամուտ խմբի 2024-2027 աշխատանքային ծրագրի քննարկման ընթացքում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Մարիանա Սարգսյան

16.04.2024թ.